

Ները ծակծըկեր էին զգաճը, գանկը փայլուն և մարուր է, և սրունքը վրայէ վրայ: Խեղճ աղջիկը երկարատև նեղութիւն չէ ունեցած, տասնեւհինգ տարուան աղջիկ մը, որուն կրածը տիսուր աղջեցութիւն մը կ'ընէ այնշափ դարերէ ետքն ալ:

Չորրորդը հակայաձեւ մարդու մը դիակն է: Կանըլի վրայ պատկած էր քաջութեամբ մեռնելու համար. իւր թեւերն ու սրունքն ուղիղ են և անշարժ: Զգեստները խիստ որոշ կերպով կը տեսնուին. Կօշիկներն աղէկ յարմար, ոտքին սանդալները ժապաւինով կապած, և անոնցմէ մէկը ոտքին մատուցներէն ծակած: Մէկ մատին վրայ

երկաթէ մատանի մը կայ. բերանը բաց է, քանի մը ակռաները ելած. քիթն ու այսերը դեռ որոշ կը տեսնուին. աշուը ներն ու մազերն անհետացած են, բայց ոչ կ'ընշապեց: Այս գեղեցիկ զիական վլրայ պատերազմողի մը նկարագիրը կ'երեւի: Յետ կանանց, որոնք մահուընէ կը խորչէին, մարդու աներկիւղ կ'երեւի աւերակաց մէջ որ զինքը կը ճնշեն: Հոս կը վերջացընեմ խօսքս, վասն զի Պոմպէան ալ ասոր նման սրտաշարժ տեսօրան մը շկրնար ընծայել մեզի: Մահ բռնական իւր կարգէ գուրս տան ջանգքը, մահ որ կը կրէ և կը կոռուի աւերակաց տեսարաններէն առնուած հազար ութէ հարիւր տարի վերջը:

## ԿՈՍՏԱՆԴԻՆ ՌԻՊՈԼԻՍ

ԷՏՄՈՆՏՈՑ ՏԵ ԱՄԻՉԻՍ ԻՏԱԼԱՑԻՈՑ

(Տէս Պը. Բ. էջ 174):

## ՊԱՐԻՍՊՔՆ

Ստամպօիկ հին պարսպաց չորս կողմի պտոյան ուղեցի միայն ընել, և ամենայն իտալացւոց որ պիտի երթամնի կոստանդնուպօլիս խորհուրդ կուտամ ինծի նմանելու, վասն զի մենաւոր մեծամեծ աւերակաց տեսիլն, ըստուգի խորին և աեական տպաւորութիւն մը շթողուր բայց եթէ 'ի նմա որ բոլորովին մտադիր է ընդունելու գոյն, և 'ի լուութեան կրնայ ազատութեամբ իր խորհրդոց ընթացից ետսէէն երթաւ Գրեթէ հնգետասան իտալական մղոնի շրջապայութիւն մը կար ընելու, հետիւոտն, արեգական ճառագայթից տակ, ամսյի ճամբաներէ: Թերեւս - ըսի բարեկամիս - մինչեւ ճանապարհին էկսը միայնութեան տիրութիւնը զայ վրաս և կանչեմ զքեզ օգնութեան իրքն Սուրբ մը. այլ վերջապահէս կ'ուզեմմ միայն երթաւ: Թասակ թեթեցուցի, որ չըլլայ թէ յանկարծ արուարձանեայ գող

մը ներսն ուղէ տեսնել. բան մը նետեցի և փափառող եղեգանց մէջ և յետայ ըսելու համար, — և լուռ կեցիր, անիծեալ զայլ — . և զիշերոյ մեղմ անձրէն մ'ելած գելցիկ երկնքի մը տակ ճամբայ ինկոյ առաւօտուան ութին գէպ 'ի Վալիտէ Սուլդանի կամուրջն:

Իմ ծրագիրս էր Ստամպօիէն ելեւ Պլախիերնեաց թաղին գռնէն, ընթանալ Ոսկեղջերէն մինչև Եօթն Աշտարակաց գղեան, և գտանալ Մարմարայի ծովուն եղերքէն, պտըտելով այսպէս մահմտական քաղաքին ամբողջ մեծ եռանկեան չորս կողմն:

Անցնելով կամուրջն, աջակողմից դարձայ և յառաջեցի իստամպուլ-տիշարը կոչուած ընդարձակ թաղն, որ քաղաքի երկայն գիծ մ'է, պարապաց և նաւահանգստին մէջ պարփակեալ:

բոլոր տնակիք և ձիթոյ և փայտի շտեմարանք, շատ անգամ հրդեհներէն տեղեւաքք: Նրբափողցաց և Ռսկեղնի ափանց մէջ, որուն երկպյնութեամբ կը տարածուի կարգ մը փոքր նաւամստոյց տեղեաց և նաւուք և մեծ նաւակզբ լցեալ ծոցերու, կայ խիտ երթեեկ մը բեռնակրաց, իշոց և ուղուուց, օտարոտի մարդկան և աղտոեղի իրաց ընդխառնում մը, և անհասկանալի խօշին մը, որ մտածել կու տոյ այն Հընդկաց ծովու և Զինաց ծովու զարմանաւի նաւահանգստից, ուր կրկին երկրագնոց ժողովուրդք և վաճառք մէկմէկու կը հանդիպին: Քաղաքին ասղիի կողմը մնացած որմունքն հինգ մարդաշակի բարձր են, ատամնաձևեալ, ամեն հարիւր քայլին կողմնակի ունին չորեքանկիւնի փորք աշտարակներ, և շատ մասերն կործանուծ. սակայն Բատամզօղի պարսպաց թէ արուեստի և թէ յիշտակաց կովաննէ նուազ նշանաւոր միջոցն են: Ֆէնէրի թաղը կտրեցի, անցնելով պտղավաճառներով, պըղակունտագործերով, անիսոն և վարդօղի վաճառզներով լցեալ ափունքը, և բացօթեայ դրուած խոհակերոցներով, իրենց վաղեմի դից արձանաց պէս կեցած, յոյն գեղեցիկ նաւաստեաց խըմբից մէջէն պտրուեցայ Պալազի լայնաւարը հրէական թաղին չորս կողմն. ընթացաց Պլանետնեաց լուանիստ թաղն, և վերջապէս քաղաքէն ելայ Հյլի - Գաբու կողուած գունէն, Ռսկեղնի բափունքէն քիչ հեռու: Այս ամենը դիւրին է ըստն. բայց մէկուէս ժամուան ընթացք մ'է, մերթ յելս, մերթ յէջս, տղմոյ ճաց բոլորիքէն, ահագին քարանց վրայէն, անվերջ նրափողոյներէ, միթին կամարաց տակէն, կտրելով ամայի լայնածաւալ միջոյներ, առանց ուրիշ առաջնորդի բայց մէջէ Ելիմի մզկիթին մինարէից ծայրն: Տեղ մը կը սկսին աղ չտեմնուիլ ոչ դէմք և ոչ ըզգեստ եւրոպեան. ապա եւրոպական տնակը աններէ ուղիթ կ'ըլլան. յետոյ սաւայտակիր, յետոյ կրպակաց նշանին, ապա ճանապարհաց նշանակն, յետոյ

ամենայն շառաջ աշխատութեան. և որչափ առաջ կ'երթաս, այնչափ աւելի շունք խոժոռ կը նային, տաճիկ աստահակի յանդուզն աջք կը դիտեն, ուամ կին կանայը խնամնվ երեսնին կը ծածկեն, մինչև որ կը գանուիս կատարեալ ասիական բարբարոսութեան մէջ, և երկու ժամուան շրջադարձութիւնը կարծեն թէ երկու օրուան ճանապարհորդութիւն մ'եղաւ:

Էյլի - Գաբուէն ելելով, ձախակողմ գարձայ և յանկարծակի հոչակաւոր պարսպաց ընդարձակածաւալ միջոց մը տեսայ, որ ցամաքի կողմանէ կը պաշտպանեն զիստանդնուուպօխիս:

Այն վայրկնէն վերջն երեք տարի անցան. բայց չեմ յիշեր զայն աւանց կենդանի զարմանաց զգացում մ'իմանալու: Չեմ գիտեր արևելից ուրիշ ուր տեղը կը գտնուին այսպէս համահաւաք քեալ մարդկեղէն դ'ործոյ մեծութիւնը, զօրութեան վեհափառութիւնը, գարուց փառքն, յիշտակաց շրեղութիւնն, աւերակաց տիրութիւնը, բընութեան գեղը: Ցեսի մ'է, որ միանգամայն հիացումն, մեծարանը և երկիւղ կը չիչէ. Հոմերոսի գրուազի մ'արժանի տեսարան: Յառաջին տեսութեան, կը բանաս գլուխսդ և կ'աղաղակես, — Փառք. — ինչպէս ծայրաւեալ հսկայակերպ զիւցազնց անզրաւական գտնող մը:

Որմոց և ահազին աշտարակաց ըլլապատը կը ձգուի մինչև ուր կը հասնի աչքն, ելելով և իշնելով ըստ բարձանց և խորոց, տեղ տեղ ամենացած որ կարծես յերկիր կը խորաստողի, տեղ տեղ բարձր՝ որ կարծես թէ կը պսակէ լիրան մը գագաթն. զանազան անսահման աւերակաց կերպարանօք, նկարեալ հազար խիստ գոյներով, գրեթէ սեաւ մութ կրայինէն գրեթէ սկեզօծ սաստիկ դեղինը, և զարդարուած թուխ կանաչի մը բարձաւած աճմամբ, որ պատերուն վրայ կը մազլէ, աշտարակաց ատամնաձևերէն և ամրոցաց ծերպերէն պսակաձև կը

կախուի, աշտարակաց ծայրը բարձրաց յօն ցցունքով կը տնկուի, կը դիզուի բարձրակուտակ բրդածեներով, գոզցես ջրվէժօրէն միջնորմներէ վար կու գայ, և կը լեցընէ խրամատներ, պատառ սուածներ և փոսեր, և մինչև ճամբուն վրայ կը յառաջէ. Որմոց երեք կարգեր են, որ աւերակաց իրրեն հսկայական սանդուղ մը կը ձեւացընեն. Ներքին պարիսպը, որ բարձրագոյնն է, հաւասար կարճ միջոցաւ քառակուսի ստուարակարկատ աշտարակներ ունի. մէջտեղինը, բոլորչի փոքր աշտարակներով ամրապնդեալ, արտաքինն՝ առանց աշտարակաց, զիջագոյն, և լայն և խորափիտ փոսով մը պաշտպանեալ, 'ի հնումն Ռսկեղներ և Մարմարայ ծովուն ջրերով լեցուած, այժմիկ խոտով և թուփերով ծածկուած: Բոլոր այս պատերը գեռ կան, քիչ շատ ինչպէս որ էին կոստանդնուպօլսոց առման երկրորդ օրը, վասն զի շատ քիչ բան են Մէհէմէշտի և Պայազիտի բ ըրած նորոգութիւնքը: Տակաւին կը տեսնուիին այն խրամատքը զորս բացին Օրպանի ահազին թնդանօթք, խոյոց և բաղըստրից հարուածոց հետքերն, ականաց ճեղքուածքը և բոլոր տեղեաց նշանին ուրանօր մոլեզգին յարձակումներն եղան և անյուսագոյն դիմամարտութիւն. Քը մլեցան Միջին որմոց բոլորչի աշտարակը զրեթէ բոլոր մինչև հրմունքը կործանած են. ներքին որմոց աշտարակը զրեթէ բոլոր կանգուն կան. այլ անստամնածն, կրծատած, գաղաթինին սրացուցած իրրեն տապարի հարուածովք ծայրասուը ըրած ահազին ծառոց բուներ, և վերէն վար ճեղքուած կամ ծովէն կրծած ժայռից պէս հիմը փորած: Որմածի ահազին կտորներ, միջնորմներէն վար գլորած, միջին և արտաքին պատին սարահարթքն և փոսը կը լեցընեն: Փոքր ճամբաներ փլատակաց և մոլախոսոց մէջ կը տղան և կը կորսուին բարձրածաղկ բուսոց աճման մութ ստուերաց տակ, որ ձաքարանց և կործանած պատերէն 'ի դուրս երկուած գետնի պատառուածոց

մէջ: Երկու տշտարակաց մէջ եղած ամենայն միջոց մարտկոցի, աւերակաց և գալարութեանց հիանալի պատկեր մ'է, լցեալ վեհափառութեամբ և մեծութեամբ: Ամենայն ինչ հսկայակերպ, վայրինական, անհամբոյր, սպառնալից է, և շքեղաչուք և տիբրագին գեղեցկութեամբ մը դրոշմեալ, որ պատկանակ կ'ազգէ: Կարծեաթէ աւատական գլուկաց անծայրենի շվլայի մ' աւերակը կը տեսնեա, կամ սյն հրաշալի պատուարաց մէկուն մնացորդը՝ որ արելեան Ասիոյ առասպելական մեծամեծ ինքնակալութիւնքը կը շրջապատէին: Ինննատամներորդ գարուն կոստանդնուպօլիսն 'ի չիք գարդած է, կոստանդինեանց քաղաքին դիմացն եւշորս հարիւրին օդը կը չնչիս. ամենայն մտածմունք անհնարին անկման օրուան կ'ընթանան և վարկեան մ'ապշած և զարհուրած կը մնաս:

Դուռն ուստի ելեր էի, 'ի Տաճկաց էյրի-Գափու կոչուած, այն հոչակապանծ կալիգարիա գուռան է, ուստի Յուստինիանոս իր յաղթական մուտքն ըրաւ, և յետոյ մոտաւ Ալեքս կոմինենոս գահուն տիրանալու համար: Դիմացը մահմետական գերեզմանատուն մը կայ: Պաշարման աւաշին օրերէն, Օրպանի այն տարապայման թնդանօթն հօն զըրուած էր, որուն բոլորտիքը չորս հարիւր գնդընկէցը կ'աշխատէին և զոր հարիւր եղինք գժուարաւ կը շարժէին: Դուռը պաշտպանեալ էր 'ի թէոդորեայ կարիստեան և 'ի Յովհաննէ կը բանդ, Ծնդդէմ տաճկական բանակին ձախոյ թեւոյն որ մինչև Ռսկեղներ կ'երկային էր: Այն կէտէն մինչև ցլմարմարա ծով չկայ ալ ոչ արուարձան մը և ոչ տանց խումբ մը: Ճանիբան կ'ընթանայ գէպ ուղիղ պատին և գաշտին մէջ: Զկայ բան մ' որ հեռացընէ միտքը աւերակաց տեսութենէն: Ճամբայինկար Երկար միջոց կրկին գերեզմանատանց մէջէն գնացի: մէկ՝ քրիստոնեայ 'ի ծախակողմը, պատին տակ ուրիշ մը մահմետական աշակողմը, ընդարձա-

կածաւալ և նոճեաց անտառով մ' ըստուերատեալ: Արեք կ'այրէր. իմ առջևս կը տարածուէր ճամբան սպիտակ և ամայի, և կամաց կամաց բարձրանալով՝ ուղիղ գծով մը կը կտրէր բըլրոյն գագաթան վրայ պայշտառադեղ երկինքը: Մէկ կողմէն աշտարակք աշտարակաց կը յաջորդէին, 'ի միւսմէն գերեզմանիք գերեզմանաց կը յաջորդէին: Միխայն իմ կանոնաւոր քայլին ոսնածայնը կը լսէի և մերթ ընդ մերթ մեծ մղեսի մը շրջինը մերձաւոր թըլփոց մէջ: Երկայն միջոց այսպէս դնացի, մինչեւ որ յանզգաստից քառակուսի գեղեցիկ դրան մ'առջև գտնուեցայ, մեծ աղեղնաձև կամարով և ութան կիւնի երկու ստուար աշտարակինքով: Աղրիանուազօլոյ դուռն էր, Յունաց Բոլիանարիան, այն որ դիմացաւ 625ին Հերակլեսի ժամնակ՝ Ավարացւոց ահեղ բախման, որ Մէհմէմէտի թ դէմ պաշտպանուեցաւ Պօզոս և Անտանինոս Տրոյիլոս Պրիփարտի եղբայրներէն, և որ ապա մուսուլման զինուորութեանց յաղթական մտից և ելից դուռն եղաւ: Աչ առջեր և ոչ չորս կողմը կենդանի անձ մը կար: Ցանկարձակի ելան արշաւակի երկու տաճիկ հեծեալք, փոշոյ ամպի մը մէջ պատեցին զիս և աներեսոյթ եղան Աղրիանուազօլոյ ճամբուն մէջ. յետոյ գարձեալ տիրեց խորին լուսթիւն մը:

Ոնտի, թիկունքս որմոց դարձընելով, Աղրիանուազօլոյ ճամբէն յառաջնեցի, Լիքոսի հովսին մէջ իջայ, երսց ըրոյց մը վրայ, և ջաւուտ-Փաշայի ալեճն և ազազուն արձականիստ դաշտին դիմաց գանուեցայ, ուր Մէհմէմէտ թ իր բանակամէջը դրաւ կոստանդնուպոլոյ առման ժամանակ: Քիչ մ'ատեն հօն անշարժ կեցայ, չորս կողմը նայելով մէկ ձեռքս աշացս վրայ, երբն կայսերական բանակետեղ հետքը փնտուելու համար և առջևս բարձր այն մեծ և նորանցան տեսին՝ որ պիտի ընճայէր այն տեղն 1453ին գարունը լմննաւ: Ըստ ժամանակ: Ճիշդ հօն կը գեղոյր, ի-

բրէ իր սիրտն, բոլոր ահագին բանակին կեանքը՝ որ օրհասսական մեծ քաղաքը կը սեղմէր իր սարսափելի զրկաց մէջ, Սնկից կ'ելէին փայլակնացոյտ հրամանքը՝ որ հարիւր հազար գործաւորաց բազուկքը կը շարժէին, որ Պէտիկ-Պաշի ծոցէն Գասարմ-Փաշայի ծոցը երկու հարիւր ցոկանաւ կը քարչէին, որ հայ ակսնահատից բանակներ գեանին խորը կը մղէին, որ զինակաց գումարտակքը հարիւր կողմէրէն կը սփռէին յարձակմանց ժամն իմացնելու համար, և թէսպիհի մը համտիներն համրելու ծախուած ժամանակին մէջ, կը լարիէն երեքհարիւրհազար աղեղներ և կը չողացընէին երեքհարիւր հազար վազակաւորներ: Հօն կոստանդնի տժգոյն դեսպանք կալագոյի ձենովացւոց կը հանդիպէին, որ եկած էին ձէթ վաճառելու Օրգանի թնդանօթքը զովացընելու համար և մահմետական լրտեսաց, որ Մարմարայի ժողուն ափունքէն կը դիտէին թէ կ'երեան հորիզոնին վրայ եւրոպական նաւատորմիզքը՝ քրիստոնէական վերջին օգնութիւնքը տանելու կոստանդնեանց վերջին մարտկոցը: Կար հօն ուրացող քրիստոնէից, ասիական բազամինդիրներու, ծեր շէյսերու, նիհազ տերվիշներու վիստալ մը, պատառուեալ և ուժամթափ յերկայն ընթացից, որ անձկութեամբ կ'երթային և կու գային եէնիչէրեաց չորեքտասան հազար վրանաց բոլորտիքը, թամբեալ ձիոց անվերջ խմբից մէջ անշարժ բարձր ուղղուց երկայնածիգ գծից մէջ, խորտակած բաղսարից և բարանաց, պայշթած թնդանօթից բեկորաց, կրանիտեայ ահագին բրգաձև գնտակաց մէջտելը. Փոշելից զինուորաց թափօրից հետ խառնուելով, որք երկու երկու ի պարըսպաց բաց գաշտի մէջ կը տանէին անկերպարան դիակներ և մոնշող վիրաւորներ ծխոյ յափառնական ամպի մը մէջէն: Եէնիչէրեաց բանակետեղ մէջտեղը Աղբունեաց գունագոյն վրանքը կ'ամբառնային, և ասոնցմէ վեր, Մէհմէմէտի թ կարմիր խորանը: Եւ ա-

մեն առաւօտ լրւստնարան պէս, ի՞նքն հօն էր, կանգոն վրանին դրան զիմաց, այլագունեալ գիշերայն վարանալից հըսկմանէն, իր գեղին ցցունքով մը զորդարուած մեծ ապարօշով և իրեն արենագոյն երկայն պարեգուուվ, և իր արձոյ հայեցուածը կը սևեռէր առջեր տարածուած անհուն քաղաքին վրայ, մէկ ձեռքովը թուխ թանձր մօրուքը տանիերով և միւսովը իրեն թէք դաշունին արձաթեսց երախակալը իրեն քով կար Օրպան, զարմանապանչ թընդ գանօթին հնարողը, որ քիչ օր ետքը ճայթերով, իր կմակիքը Արձակարանին դաշտագետնոյն վրայ պիտի նետէր. Պալթա-Օղուր ծովական, արդէն խռոված պարաւոթեան նախազգացութենէն, որ Մեծ իշխանին ոսկեղէն ցուողը իր գլխոյն վրայ իջեցընել տուաւ. Երեբողինի յանդուգն հրամանատարը, շարժական մեծ ամրոցը, աշտարակիք պսակուած և երկաթակուռ, որ ապա սուրբ Ռումանոսի դրան զիմաց աճիւնացեալ ինկաւ. Հարիւր պատերազմաց արեէն խանձած բանատեղից և օրէնսդիրաց շրջանակ մը. սպիներով ծածկուած անդամօք և նետերէ պատառուած պարեգուներով փաշաներու չքաղիր մը. ՚ի բոին մերկ սուրերով հսկահատակ կէնդիշերեաց և պոլպատէ գաւազաններով զինուուած շաւուշներու բազմութիւն մը, պատրաստք ապատամբաց և վատաց գլուխները վար ձկելու և մարմինքը կեղեքերու. բոլոր այն ասիսկան անսպառ բազմութեան ծավիկը, ցցեալ առուգութեամբ, կատաղութեամբ և ուժով, որ բիւզանդական ինքնակալութեան զառամեալ նշխարաց վրայ երկաթեղէն և հրեղէն հեղեղի մը պէս հորդան տալու վրայ էր. և ամենքն արձանաց պէս անշարժք, արշալուսոյն առաջին ճառագայթներէն վարդադշն ներկուած հորիզոնին վրայ՝ կը նայէին Մարգարէէն խոստացած քաղաքին արձաթեայ հազար գմբեթաց, որոնց տակը այն ժամուն վատասիրտ ժողովը դեան աղօթքն և հեծեծանիքը կը հըն-

շէին : Ես կը տեսնէի երեսներն, կեցուածներն, գաշոյններն, կրկնոցաց և պարեգութից ծաքերին, և մեծամիծ ըստուելքն որ թնդանօթաց և աշտարակոց անկանելէն փորուած գետնին վրայ կ'երկննային : Բայց յանկարծակի, կէս գետինը խրած խոչըր քարի մը վրայ աշքերս ինկնալով, և կարգալով հօն անհարթ արձանագրաւթիւն մը, այն մեծ պատկերն անհետ եղաւ ցնորական տեսլեան մը պէս, և անսայ մերկ գայատին վրայ վէնսանի որսորդաց զըւարթալից բազմութեան մը, զուաֆներու և կարմրատարաստ հետևակաց սընփոկիլը. լսեցի բրովանսի և նորմանափոյ երգոց երգուիլը. տեսայ զմարածախանն Անդ-Արնոյ, Գանրոպէր, Ֆորէյ, Խորինաս, Բելիսահէ. ճանչցայ հազար երեսներ և հազար կենդանի գոյներ մորփիս մէջ և ՚ի մանկութենէ իմ սրուխ սիրելի . . . և այն խեղճ արձանագրութիւնը զարմանաց և հաճութեան անբացատրելի զգացմամբ մը նորէն կարգացի, որ կ'ըսէր, — եւզինէս Սագար, տասնապետ 22<sup>ր</sup> թեթեազէն գնդին մէջ, 16 Յունիս 1854:

Անափ անցոյ նորէն Լիքոսի հովիտը և գարձայ պարսպաց քոյիչն անցնող ճամբան վրայ, միշտ ամսոյի և միշտ օձապտոյտ աւերակաց և գերեզմանատեղիաց մէջ : Անցայ բեմդիգի զինուուրական հին դրան դիմացէն, զարդիս որմեալ վերսալն անցայ Լիքոսէն, որ այն կէտին քաղաք կը մտնէ, և վերջապէս հասայ թնդանօթի կոշտած դրան առջեւ Օրպանի մեծ թնդանօթէն, որ հօն զիմացը գարանեալ էր. գուռան՝ որուն զէմ Մէհէմէտի բանակը իր վերջին յարձակումը գարձուց : Բարձրացրնելք այլքերս պարսպաց ծայրը, սեսայ տամանածներոն ետև քանի մը սեաւ սոսկալի երեսներ, զիսախախի մազերով, որ ապաւթեան զիքուով մ'ինծի կը նայէին : Յետոյ գիտցայ որ հօն բօշաներու ցեղ մ'իր բնակութիւնը զըրերէ էր, հալսանելով իրեն հիւզերն միջնորմոց և աշտարակաց ճեղքուածոց մէջ :

Հօս յիրաւի կուռոյն հետքերն հըս-  
կայական են և հոյակապ. որմունք խո-  
ռոշացեալք, ծակոտեալք, փշբալք.  
աշտարակը երկատեալք և անկերպա-  
րանք, հողաբըլորք վլատակաց լերանց  
տակ թաղուած, ծերագր ամրոցաց ճեղ-  
քեալք, գետինը վեր ՚ի վայր, փոսը  
վիժխարի բեկորներով լեցուած, որ  
լեռնէ մը վիլած ժայռից հատորներ կը  
կարծուին. կարծես ահաւոր պատե-  
րաղմը օր մ'առաջ մղուեր է և աւե-  
րակը մարդկեղէն ձայնէ մը լաւագոյն  
կը պատմեն սոսկալի նախճիրը որուն  
հանդիսատես եղան. Եւ անկէ ոչ ինչ  
ընդհատ եղաւ ամեն դրանց զիմաց,  
պարսպացրուոր երկսյնութեամբ. Յո-  
մանեան բանակը չորս ահազին առաջք  
բաժնուած էր, և յառաջեալ հարիւր  
հազար ինվնակամ զինուորներէ, որ  
մահու նախասահմանուած անհուն յա-  
ռաջամարտիկ մը կը ձեացընէին: Բոլոր  
այս թնդանօթի մարմինը, այս անկիրթ  
և յանդուզն թաթարաց, կովկասեանց,  
արաբաց, սեոց ամբոխը, չէյսերէն ա-  
ռաջնորդեալ, տէրիվներէն գրգուեալ,  
շավուշներու բանակէ մ' արջաւաջլաց  
հարուածով յառաջ մղեալք, նախ  
խոյացաւ ՚ի յարձակումն, հորով և  
շերտից խորձերով բեռնաւորեալ, մի  
միայն շղթայ մը յօրինելով կ Մարմա-  
րա ծովին ցըսկեղջեւր գոշուն մը միայն  
արձեկելով: Երբ փոսին եղերքն հասան,  
երկածի և քարանց կարկուտ մը զի-  
րենք՝ կը կասեցընէ և կը ջարդէ. հա-  
րիւրաւոր կ'ինկնան, որճաբարերէ ճրզ-  
մուած, նետերէ ծակծըլկած, գնտակ-  
ներէն շանձահարած, թնդանօթաց  
բոյերէ այրած, ծերք, մանկունք, գե-  
րիք, գողք, հովիք, հուղկահալք. կը  
փոխանակեն ուրիշ ամբոխը, աւելի հե-  
ռաւոր ամբոխներէ մղեալք. քիչ ժա-  
մանակի մէջ փոսը և եղերքները դիոց  
կցյուրով, դողդոյուն անդամներով, ա-  
րիւնազանդ փակեղներով, աղեղներով,  
վաղակաւորներով ժածկուած են. ո-  
րանց վրայ ուրիշ զիներոց հեղեղներ  
միմաւալով կ'անցնին և կ'երթան խոր-  
տակուելու և արեամբ թաթխուելու

միջնորմնց և աշտարակաց ոտքը, ոլ-  
լաքաց և քարանց աւելի թանձրախիտ  
տեղատարափի մը տակ, հոծ ամփի մը  
մէջ որ կը քողասուզէ պարիսաքը, պաշ-  
տպանողը, մեռեալքը, ճամբան, մին-  
չե որ սոմնանեան հազար փողքը կը  
լսեցրնեն իրենց հնչմունքը պատերազ-  
մին խոռովութեան վրայ, և մեծ յա-  
ռաջամարտիկը երկու բաժնուած և ա-  
րիւնաթաթաւ որմոց ամեն գէն խառ-  
նիխուուն յետս կը նահանջէ: Այն ա-  
տեն Մէջմէմէտ թ կ'արձըլկէ ՚ի գույթ  
իրեն զօրութեանց ստուարագոյնը: Ե-  
րեք մեծ բանակը, երեք ուղիւր մարդ-  
կանց, վարեալք ՚ի հարիւր Փաշայից,  
վերաթուոցեալք ՚ի հազար գրօշից, կը  
յառաջնեն, կը լայննան, բարձունքը կը  
ծածկեն, կը խուժեն ձորերը, կ'իջնեն՝  
շեփորայից, թմբկաց և սուսերաց ա-  
հաւորալուր գափիւն մը հանելով, և  
արձկելով աղաղակ մը. — Լա իլան իլլ'  
Ալլան, — որ փայլական բոմբիւնի մը  
պէս Ռսկեղջերէն ցեօթն Աշոտարակս կը  
հնչէ, ընդուսա կ'ընթանան և կ'երթան  
թաւալերու պարապաց վրայ՝ մրրկա-  
ծուփ ովկիանոսի մը պէս սեպաձե կը-  
տրուած ժայռից ափունքի մը գէմ:  
Այն ատեն կը սկսի մեծ կոփւը, և կամ  
հարիւր կոփւներ, գրանց վրայ, խրա-  
մից մէջ, ՚ի փոսս, հողարլոց վրայ,  
միջնորմոց ոտքը, կոստանդնուպօլսոց  
գարական ահազին մարտկոցին մէկ  
զիմէն ցմիւսը: Տասն հազար ամրոցի  
երգչք՝ երկու հարիւր հազար կենաց  
վրայ մահ կը ժայլմէրէն: Միջնորմոց  
և աշտարակաց բարձրէն կը հոլովին  
որձաբարինք, գերանք, հողով լցեալ  
տակառք, հրավառեալխուրձք շերտից:  
Հրոսողներով բեռնաբարձ սանգուզք  
կը կործանին. բաղիստրներն կայծա-  
կունս կը թօթափիեն, գունդ գնդի ե-  
տենք կը գոռթեն և կ'իյնան, շան-  
թահարեալք, վլատակաց վրայ, ջախ-  
ախեալ մեռելոց վրայ, օրհասականաց  
վրայ, արեան մէջ, ջրոյ մէջ, ընկերաց  
զինուց վրայ, թանձրահոծ ծխոյ մը  
ներսը, յունական հրոյն յանկարծա-  
ծագ բոցէն հօս և հօն լուսաւորեալ,

երկաթաձիր ոմբաց բարկանայթ շը-  
շիւնից, ականից ճարճատմանց, ծայ-  
րատելոց մանչմանց, ԱՇՀԷմմէտի ութե-  
տամն մարտկոցաց ահառնալուր բոմ-  
բիւնից մէջէն, որ 'ի բարձանց կը շան-  
թահարեն քաղաքը: Մերթ ընդ մերթ  
կուրը կը մերդմանայ իբրև շունչ առնլու  
համար, և այն ատեն Սուրբ Ռումանոսի  
դրան լայն խրամատին վրայ, անդայ-  
տացեալ ծխոյն մէջէն, կը տեսնուի  
վայրկեան մը կոստանդնի ծիրանե-  
գոյն լոգկին ծածանումը, Յուստինիա-  
նիի և Քրանկիսկոս Դոլետոյի զրահից  
շողիւնը, և ճննոնվացի Երկինարիւր ա-  
ղեղնաւորաց ահեղ կերպարանաց խառ-  
նարնդոր շարժումը: Յետոյ խառնուր-  
դընորէն կը զսյրանայ, ծուխը կը ծած-  
կէ խրամատքը, սանդուղք կը յենուն  
պարսպաց, և կը սկսին ինկնալ աւե-  
րակի աւերակաց վրայ և դիակոնք դիա-  
կանց վրայ Աղրիանուազօլոյց գուուը,  
Ոսկեայ գուուը, Սէլիմպերից գուուը, Դե-  
գարդէի գուուը, Բէմբդի գուուը, Ռուս-  
սիոնի գուուը, 'ի Պլախիենենայս, 'ի Հեպ-  
տապիրգիոն. և զինեալ ամրուիք զինեալ  
ամբոխից ետևէն, որ կարծեն թէ գետ-  
նէն կ'ելլեն, չեն գազրիր հորդան տա-  
լու պարսպաց դէմ, կ'անցնին փոսը և  
առաջին միջնորդիք, Կ'յյան, կ'ելլեն,  
կը մազլցեն քարակոյտերէն վեր, կը  
սողան դիականց վրայ, նետից ամպոց  
տակ, գնտակաց մրբկաց ներքե, հրե-  
ղեն տարափից տակ: Հուսկ ապա հրո-  
սովք անօսրացեալք և ոգեթափք, տե-  
ղի կուտան, ընդ կրոնկին կը դառնան,  
ցիրուցան կ'ըլլան և յաղմութեան բար-  
ձրաբարբառ աղաղակ մը և սրբազնի եր-  
գոյ հանդիսական պար մը պարիսպնե-  
րէն կը բարձրանայ: Սուրբ Ռումանոսի  
ճակատուն սարաւանդէն, ԱՇՀԷմմէտ

Բ, պարփակեալ 'ի չորեկտասասն հա-  
զար Եէնիչէրեաց, կը տեսնէ, և քիչ մը  
ժամանակ տարտամ՝ կը մնայ թէ ար-  
դեօք պէտք է միւսանգամ փորձել յար-  
ձակումը կամ ետ կենալ ձեռնարկու-  
թենէն: Այլ իրեն ահաւոր զինուորաց  
վրայ հայեցուած մը պարտցնելով՝ որ ի-  
րեն երեսը կը նային մրմուալով ան-

համբերութեամբ, կը կանգնի խրոխտանօք ասպանդակաց  
վրայ և ուրիշ անգամ՝ մալ կ'արձգիէ  
պատերազմի աղաղակը: Այն ատեն  
կլստուծոյ վրէժխնդրութիւնն է որ կը  
խոյանայ: Եէնիչէրիք չորեկտասասն հա-  
զար ձայնով կը պատասխանեն 'ի մի  
ձայն. զօրաց առաջքը կը շարժին: տէր-  
վիշներու ամբոխ մը կը տարածուի բա-  
նակին մէջ ցրուածքն խրախուսելու, չա-  
փոշք փախստականքը կը կեցընեն,  
փայտաք գունդերը կը ձևացընեն, Սուլ-  
դանը շնողայլնելով իր երկաթեայ լախ-  
տը, կը յառաջէ սուսերաց և աղե-  
ղանց շոշպողիւնի մը, ապարօշից և  
սաղաւարտից ծովու մը մէջէն: Սուրբ  
Ռումանոսի դրան վրայ նորէն կը թափի  
նետից և գնտակաց կարկուտ մը: Յուս-  
տինիանի վիրաւորեալ աներևոյթ կ'ըլ-  
լայ: Խոտալացիք սրտաթափը կը խառ-  
նաբնդորին: Ակսյազօր Եէնիչէրին հա-  
սան Օլուտափ նախ առաջին մարտկո-  
ցաց վրայ կ'ելլէ: Կոստանդին իրեն Սո-  
րէյի վերջին քաջաց մէջ պատերազ-  
մելով, ատամնաձեռէրէն կը թաւալի,  
դրան քով գեռ կը կուուի, տապալ յեր-  
կիր կը կործանի դիականց մէջ . . . , Ա-  
րեկելեսն ինքնակալութիւնն ինկած է:  
Աւանդութիւնը կ'ըսէ՝ որ ուր գտնուե-  
ցաւ կոստանդնի մարմինը, մեծ ծառ  
մը տեղը կը նշանակէր. այլ անոր հետ-  
քըն ալ չի տեսայ: Այն քարակուտից  
մէջ, ուր արեան առուք ընթացան,  
մարգարիտ և հովանոցակերպ ծաղկօք  
գետինը բոոր սպիտակ էր, որոց վրայ  
թիթեռնիկներու բազմութիւնն մը կը  
թշչուէր: Յիշատակի համար ծաղիկ մը  
փրցուցի, բօշաներուն ապշած աշաց  
տակ, և ճամբար ինկայ:

Պարիսպքը միշտ առջևս կը տարա-  
ծուէին անծայր: Բարձր տեղերն բո-  
լորովին քաղաքը կը ծածկէին, այնպէս  
որ ով որ չգիտանար, չէր կրնար բնաւ-  
մածել որ այն առանձնակ և լրանիստ  
աւերակաց ետև ընդարձակ մայրաքա-  
ղաք մը կարենայ ըլլաւ, զարդարուած  
մեծ ամեծ յիշատակարաններով և բնա-

կեալ մեծ ժողովրդենէ մը : Ընդ հա-  
կառակն ցած տեղերն ատամնաձեւ-  
րուն ետև կ'երենային մինարէներու  
արծաթազօծ ծայրեր, գմբեթաց գա-  
գաթներ, յունական եկեղեցեաց տա-  
նիներ, նոճեաց կատարներ : Հոս և  
հօն, միջնորմոց պատառուածէ մը հա-  
րւանցի կը տեսնէի, ինչպէս յանկար-  
ծակի բացուած և գոցուած գռնէ մը,  
քաղաքի կտոր մը, տանց խումբեր որ  
երեսի վրայ թողած կը կարծուէին,  
ամայի ձորակներ, պարտէլներ, բու-  
րաստաններ, և աւելի հեռու ընդ ա-  
զոա նկարեալ միջօրէի սպիտակ պայ-  
ծառութենէն, Ստամոզի երեւակերպ  
շրջակայըը Դէղարդէի որմած դրան դի-  
մացէն անյայ, միայն ամենամօտիկ եր-  
կու աշտարակներէ նշանակուած : Այն  
տեղը պատերն աւելի աղէկ պահուած  
են. Թէոգոսի Բ միջնորմոց երկար կտոր-  
ներ կը տեսնուին, գրեթէ անարատ .  
Պրետորիոս Անտեմիոսի և կիւրոս կոս-  
տանդնի ինքնակալին գեղեցիկ աշտա-  
րակներ, որ դեռ կը կրեն փառաւու-  
րապէս անխոց գլուխներնուն վրայ ի-  
րենց Հնգետասան դարրոց պսակը, և  
կարծես թէ առ ոչինչ կը համարին  
նոր յարձակում մը : Քանի մը կէտեր,  
Հողաբլոց վրայ գեղացիներու տաղա-  
ւարներ կան, որ անակնկալ կերպով  
դուրս կը ցատկեցնեն, իրենց տկար  
փարզկութեամբ, պարսպաց ամիսակուռ  
վեհափառութիւնը, և լերան մը վա-  
խուու կողերէն կախուած թռչնոց բու-  
նից կը նմանին : Եւ աշակողմը միշտ գե-  
րեզմանատունք, նոճեաց անտառք յելս  
և յէլս, գորշագոյն ձորակներ գերեզ-  
մանական քարերով . Հոս տէրմիջներու  
պանք մը, սօսեաց պսակով մը կէս ՚ի  
կէս ծածկուած . Հօն մենաւոր սրճա-  
րան մը . աւելի անդին ուռենիով մը  
Հովանաւորեալ աղքիւր մը . և անտա-  
ռակներէն անդին, սպիտակ ճամբաներ՝  
որ բարձր և ցամաքուտ դաշտի մէջ կը  
կորսուին, շացուցի երկնքի մը տակ,  
յորում անգեղը կը պարագային :

- Յետ քառորդ մի ևս ժաման ճամ-

բայ ընկերու , ԵԼՆԻ-ՄՇՎԵՀԱՆԷ կոչու ած  
դրան դիմաց հասոյ, տէրսիջներու ա-  
նուանի վանքէ մը՝ որ առջեն է . ցած  
դուռ մը, յորում աղուցեալ են չորս  
մարմարնեայ սիւնք, և որոնց կողերն  
Կ'ամբառնան քառակուսի կրկին աշ-  
տարակը, կիւրոս կոստանդնի արձա-  
նագրութեամբ մը զարդարուած, յա-  
մին 447, և Յուստինոսի Բ և Ասփիայի  
արձանագրութեամբ մը, յորում կայսե-  
րական անուանց ուղղագրութիւնը ըր-  
խալած է , Հետաքրքրական ճաշակ Ե<sup>ւ</sup>  
դարուն խժդժական տգիտութեան :  
Դոնէն ներս նայեցայ, պարսպաց վրայ,  
մենաստանին չորս կողմէր, գերեզմանա-  
տեղեաց մէջ, կենդանի մարդ մը չկար:  
Քանի մը վայրկեան հանզէցայ պզոի  
կամրջին պսակին կրմնած՝ որ ձգուած  
է պարսպաց փոսին վրայ, և յետոց շա-  
րունակեցի ճամբաս :

Կոստանդնուպոլսոց գեղեցկագոյն  
տեսարաններէն մէկուն յիշտակը կու-  
տայի ես փոխանցել կարենալու հա-  
մար յընթերցողն խորին և նորանշան  
զգացման ասոււեր մը միայն՝ զոր կը  
կրէի՝ պյապէս միայն երթալով այն կըր-  
իին անեղր շղթայից աւերակաց և գե-  
րեզմանաց մէջնէն, այն արեգական տակ,  
այն խիստ միայնութեան մէջ, այն ան-  
հուն խաղաղութեան մէջ : Շատ ան-  
դամ իմ կենացս տխուր աւուրց մէջ ե-  
րեսկայելավ, փափագեցայ գտնոււելու  
խորհրդաւոր և անմուռն ամբովի կա-  
րաւանի մը մէջ, որ մշտնին նաւորսապէս  
քայէր անձանօթ երկիրներէ, դէպ յան-  
տեղեակ նպատակ մը : Խսկ արդ այն  
ճամբան այն իմ բղդէցս կը համապա-  
տասանիէր : Կ'ուղէի որ բնաւ շլմնար :  
Այլ ինձի տրամութիւն շէր շնչեր . ընդ  
հակառակն ինձի անդորրաւթիւն և հա-  
մարձակութիւն կու տար : Այն բուսոց  
անման զօրեղ զցներն, այն պարսպաց  
կիկուպեան կերպարանքն, այն խոռովա-  
կոծ ովկիանոսի մարթեաց նման գետ-  
ոցն՝ մեծամեծ գիծերն, այն ինքնակա-  
րաց, զինուորութեանց, տիտանական  
մաքառմանց, չքացած ժողովրդոց, մե-

սետլ սերնդոց հոյակապ յիշատակը, այն ահագին քաղաքին քով, այն մահամբոյր լուսվեան մէջ, միայն արծուեաց թեոյ զօրաւոր շառաշիւնէն կորուած, որ կը խոյսնային աշուարակաց գագաթներէն, մտաց մէջ հսկայակերպ ցնորից և տարապայման ըդձից եռապում մը կը զարթուցանէին, որ իմ կենաց զգայումը կը կրկնապատիէր : Կ'ուզէի երկու թիզ աւելի բարձր ըլլալ և Սաքսոնիոյ Մեծ կոյսրդրոյն սոսկավիժմասը զրահն, զոր տեսեր էի Մատրիտի Զինանոցին մէջ, հագնիլ, և իմ քայլս հնչէր այն լութեան մէջ միջին գարու տիգաւորաց գնդի մը շափակցեալ քայլին պէս : Կ'ուզէի ունենալ ծիտօնի մը զօրութիւնն այն մեծաշէն պատուարաց աննուէր գերբուկներն բազկաց մէջ վերցընելու համար : Կը քալէի բարձրիզմախ, կնճռեալ յօնիք, աչ ձեռքս փակած, արձակ մեծամեծ տողերով կոստանդին և Մէհմէմիւտ բացագանչելով, տեսակ մը պատերազմական արբեցութեան մէջ յափշտակուած, բոլոր ոգւովս անցելոյն մէջ. և ես մտաց և արեանս մէջ այնքան երիտասարդութիւն կը զդայի, և միայն ըլլալուս այնպէս երջանիկ էի, և այն լի կենօք միայնութեան այնպէս նախանձու էի, որ չէի ուզեր հանդիպել և ոչ իմ մտերմագոյն բարեկամներուս :

Տրիտէի զինուորական հին դրան զիմացէն անցայ, այսօր փակուած : Քանդուած միջնորմը և աշտարակը կը ցուցընեն որ այն միջոցի պարսպաց առջև Օրպանի ստուար թնդանօթներէն քանի մը հտագրուած եղած պիտի ըլլան : Մանաւանդ կը կարծուի որ հօն ըլլայ այն երեք մեծ խրամատներէն մէկն՝ զոր Մէհմիւտ թակնարկեց բանակին յարձակման առջի օրն, երբ ըստ, — Դուք կրնաք մտնել ձիւաւոր ՚ի կոստանդնուպոլիս իմբացած երեք խրամատներէս : — Հօնկէ ելլայ բաց դրան մը դիմաց, ութանկիւնի երկու աշտարակներով, և ճանչցաց ոսկւոյ գեղեցիկ գունով

մ'եռուկամար փաքը կամրջէն Անիսուի գուռն, ուսկից Սելիմերիա քաղաքն ատանող մեծ ճամբան կը սկսէր, որ իր անունը անոր տուաւ, փոխեալ ՚ի Տաճկաց Սելիմի : Մէհմիւտի զաշարման միջոց, Մաւրիտիոս Գաղգանէց ճենուացին կը պաշտպանէր այն գուռն : Ճամբան կը պահէ գեռ Յուստինիանոսի ընել առուած սալոյատակին քանի մը քարերն : Ունչը կոյ ընդգարձուի գերեզմանատեղի մը կերեղմանատեղի մը և գերեզմանատեղի զիէն անդին ամենածանօթ Պալըրլը մենաստանն :

Հազիւ գերեզմանատուն մտայ, ես ինծմէ միայն գտայ մենաւոր տեղն ուր թաղուած են զըւիք հռչակաւոր Տէփէտէլէնլի Ալիին, Եանեսոյի փաշային : Իրեն որդւոցը Վէլիի, Դիրհաւայի փարշն, Մոխթարայ, Սըրոնիոյ Հրամանատարին, Սահիհի, Լէբանոնդոյի հրամանատարին . և իր եղբօրորդւոյն Մէհմիւտի մէտի, որդւոյ Վէլիի, Տելվինայի հրամանատարին : Փարէ հնդգ սիւնակներ են, բակեղաձև աւարտած, որ բոլորն ալ 1827 թուականն ունին, և ամենապարզ արձանագրութիւն մը, զոր Ալիի մանկութեան բարեկամն այն խեղճ Սիւլէյման տէրվիշն գրած է, որ զնեց դույիներն, Պալատան ատամնաձեւերէն վար առնելէն ետև, և իր ձեռքով զնննկ թաղեց : Ալիի կոմողին արձանագրութիւնն, որ մէջտեղն գրուած է, կ'ըսէ : — Հօս կը հանգչի Տէփէտէլէնլի Ալի-Փաշային զըւին, վարիչ Եանեսոյի Սանճիազագիին, որ յիսուն աարիէն աւելի Ալպանիոյ անկախութեան համար աշխատեցաւ : — Ար կը ցուցընէ թէ նաև մահմետական գերեղմանաց վրայ գորովական սուտեր կը գրուին : Արձանացայ քանի մը վայրիկեան նկատելու այն քիչ հոգն որ այն սոսկարի զըւին կը ծածկէր, և միտքս կու գային Ամիեղի հարցումներն առ գանկն Եօրիքի : Ուր են քու բալիկարներդ, ով առիւծ Եպիւրոսի : Ուր են քու քաջ Առանաւուներդ և քու թնդանօթներով ցցուեալ պալատներդ և քու գեղեցիկ

Հովանոցդ Եանեայի մէջն ցոլացեալ և  
քու ժայռից մէջ թաղուած գանձերդ  
և քու Վասիկիքայիդ գեղանի աշուըներն  
եւ կոսանդնուպօլսոյ ճանապարհաց  
մէջ թափառական ամենադեղ կնկան  
կը մտածէի, իրեն երջանկութեան և իր  
մեծութեան յիշատակներով եղուկ և  
տառապեալ, երբոր թեթեւ շրջիւն մը  
լսեցի, և ետ դառնալով, տեսայ եր-  
կային և չոր մարդ մը, սեւա մեծ պատ-  
մուճան մը հագած, բաց զիսով, որ  
հարցանողական կերպով մ'ինծի կը  
նայէր: Առ իս ըրած ակնարկութենէ  
մը հասկըցայ որ Պալքըլյի յոյն կրօ-  
նաւոր մ'էր, որ հրաշալի աղբիւրն կ'ու-  
զէր ինծի ցուցնել, և իրեն հետ դէպ  
'ի մենաստանը սկսայ երթալ: Լու-  
նիստ դաւթի մը մէջէն տարաւ զիս,  
բացաւ դռնակ մը, կանդեղ մը վառեց,  
սանդղիկէ մը զիս իր հետ իշեցուց թաց  
և մթին կամարի մը տակ և տեսակ մը  
ջրհորի դիմաց կենալով, որուն վրայ  
ճրագին լցան ամփոփեց մէկ ձեռորդն,  
ակնարկեց ինծի նայելու լցոյն մէջ կայ-  
տող ձկանց: Մինչդեռ կը նայէր,  
փսփաց ինծի անհասկանալի ճառ մը,  
որ ձկանց հրացքին հոչակաւոր առաս-  
պելը պիտի ըլլար: Մինչդեռ Մուսուլ-  
մանք յետին գուղթը կու տային կոս-  
տանդնուպօլսոյ վրայ, յոյն կրօնաւոր  
մ'այն վանքին մէջ ձուկ կը տապէէր:  
Յանկարծակի խոհակերոցի գրան վրայ  
ուրիշ կրօնաւոր մ'երեցաւ, բոլորովին  
սարսափած, և աղաղակեց, — Քաղաքն  
առնուեցաւ: — ի՞նչ. — միւլը պատաս-  
խանեց — կը հաւատամ ըսածիդ եր-  
բոր տեսնեմ տապակէն գուրս իմ ձը-  
կանց ցատկին: — Եւ ձկունքն մէկէն  
դուրս ցատկեցին գեղեցիկ և կենդա-  
նի, իէս սե և կէս կարմիր, վասն զի  
միայն մէկ կողմէն տապակած էին, և  
ինչպէս որ ամենայն որ կրնայ մտածել,  
երկիղածութեամբ յիշոյն մէջ զրուե-  
ցան՝ ուր բոնուեր էին և ուր գեռ կը  
կայտուն: իրեն խօսակցութիւնը լըն-  
նալէն ետքը, կրօնաւորը քանի մը կա-  
թիւ օրհնած յուր ցանեց երեսս, որոնք  
ձեռքն ինկան զրամի փոխուած, և հե-

տըս ընկերելէն վերջը 'ի գուռն, մինչ-  
դեռ ես կը հեռանայի, քիչ մ'ատեն  
կեցաւ ինծի նայելու իրեն ձանձրացած  
և քնածու փոքր աշուըներովն:

Եւ միշտ մէկ կողմէն պատ պատի  
ետքէն և աշտարակ աշտարակի ետե-  
ւէն, և 'ի միւսմէն՝ հովանաւոր գերեզ-  
մանատեղիք, քանի մը կանաչ դաշտ,  
քանի մ'այգեստան, քանի մը քա-  
կուած տուն, և անկէ անդին, անա-  
պատոն: Երբեմն ցած տեղէ մը պարըս-  
պաց նայելու ատեն, կը կարծէի անոր  
վերջին ծայրն տեսնել. այլ քիչ մը վեր  
եկելով, նորէն կը տեսնէի զայն որ առ-  
ջևս կը տարածուէր անվերջ, և ամեն  
քայլին դուրս կը ցատկէին աշտարակը,  
հեռու, մէկն միւսին ետև, երկու, ե-  
րեք մէկտեղ, իրեւ ճամբուն վրայ վա-  
գիչն տեսնելու թէ ով կը խոսվէր այն  
միայնութեան լսութիւնը: Այն միջո-  
ցին մէջ բուսոց աճումը զարմանալի է:  
Ցերեալից ծառք կ'երկննան աշտարա-  
կաց վրայ, իբրև հսկայած անօթոց.  
կը կախուին ատամնածեերէն գեղին  
ծաղկանց և կարմիր ծաղկանց և բա-  
ղեղանց և այծիտերեց պսակաց գէսներ.  
վարը մոլաթենեաց, հերձեաց, եղիծ-  
ներու, մորենեաց անճողոպրելի թու-  
փեր կան, որոց մէջ սօսիք և ուռենիք  
կը բարձրանան, որ ստուերով կը ծած-  
կեն փոսն և եղերքն: Որմայ մեծամեծ  
միջոցք բաղեղիչն բոլորովին ծածկուած  
են, որ կը բռնէ ուռկանի մը պէս ա-  
ղիւներն և փրթած կրոյ կտորուանքն,  
և կը ծածկէ խրամատներն և ամրոցի  
ծերպերն: Փոսն պարտիզաձեւ մըշա-  
կուած է. եղերացը վրայ կ'արածին  
պէք և ոչիարք պահպանեաց 'ի յոյն  
մանկանց, ընկողմանեալք ընդ հովա-  
նեաւ ծառոց. պարիսպներէն թոշնոց  
երամներ կ'ելլեն. լի է ողն վայրենի խո-  
տոց սաստիկ հօտովն: և չգիտեմ ինչ-  
պիսի գարնանային բերկութիւն կը  
չնչէ աւերակաց վրայ, որ Սուլդանու-  
հայ մը յաղթական անցքին համար  
պսակաւորեալ և ծաղկաւոտացեալ կը  
կարծուին: Յանկարծակի աղային օդոց

փշում մը զբացի երեսս 'ի վեր, և աչքս բարձրացնելով տեսայ հեռուն իմ առջև Մարմարայ ծովուն կապոյաց, Նոյն կէտին ինձի երեցաւ որ գան ձայն մ'ականիշս միմնջէ. — Դղեակն իօթն Աշտարակաց — և ճամբուն մէջ վայրկան մը կանկ առի, անհանդարտութեան տարտամ զբացմամբ մը: Յետոյ ճամբաս շարունակեցի, Տեւկերայի հին դրան դիմացէն անցայ, անցայ Մելանտեղիա գուռն, և գտայ զիս դըղեկին դիմաց:

Այս չարեաց գուշակ շինուածն, բարձրացեալ 'ի Մէհէմէտէ Բ Յունաց հին կիկլորիոնին վրայ, քաղաքը պաշտպանելու համար այն կէտին մէջ յորում պարիսպը որ կը պահպանն զայն ցամաքին կողմէն կը միանան աննոնց հարտ որ կը պաշտպանն զայն Մարմարայ ծովան կողմէն, և ապա Տէրութեան բանտի փոխուած, այն ինչ Սուլդանաց վերջին աշխարհակալութիւնքը, պաշարման մը վոսնդէն Ստամբոլ ապահովընելով, անօդուա ըրին զայն իրեն բերդ. հիմայ տրիշ բան չէ բայց եթէ դղեկի կմահիք մը, 'ի սակաւաթիւ զինուորաց պահուած. անիծեալ աւերակ մը, ցաւագին և սարսափելի յիշատակներովլիցեալ, որ գծնէ առասպելներովլ բոլոր կոտանդնուպօլսոյ ժողովրդոց բերանները կ'ընթանան, և սովորաբար 'ի ճանապարհորդաց հարեանցի տեսնուած նաւուն գլխէն որ զանոնք յիսկեղջիւր կը տանի: Տաճիկը կը կուեն զայն Եէտի-Գուլէ, և իրենց համար այն է ինչ որ Պասդիլեա Գալզիյ համար և Լոնտրայի Աշտարակն Անգղիոյ համար, յիշատակ մը՝ որ Սուլդանաց ամենէն դարչելի ժամանակներն կը յիշեցընէ:

Քաղաքին պարիսպներն ճամբէն նայող աշաց կը ծածկեն զայն, բաց յերկոցունց յեօթն մեծամեծ աշտարակացն որ անունն իրենց տուին, յորոց միայն չորսն ամբողջ են: Արտաքին պատին վրայ կան երկու կորնթական սիւնք, որ ոսկեղծ հին Դրան կը վե-

րաբերէին, ուսկից ներսէս և Հերակիս իրենց յաղթական մուտքն ըրին, և որ նոյնն է, բայ մուսուլմանաց և յունաց հասարակ առասպելի մը, ուստի պիտի անցնին Քիշտառնեայք այն օրն՝ յաղթական պիտի մտնեն կոտանդիանոսի քաղաքին մէջ: Մտնելու գուռն պարուաց մէջն է, քառակուսի փոքր աշտարակի մը մէջ, որուն զիմայք հողաթափ հազած պահանորդ մը կը մրափէ, որ գրեթէ միշտ կը հաւանի որ մտնէ մի և նոյն ժամանակ դրամ մ'ի գրպանն ի ճանապարհորդ մ'ի դղեակն:

Մտայ և գտայ զիս միայն մեծ շրջապատի մը մէջ, գերեզմանատան և բանտի սգաւոր տեսմամբ մը, որ քայլս կեցուց, կ'ամբառնան շորս կոյժմ ահագին և թուու որմունք որ հնգանիւն մը կը ձեացընեն, պսակեալ քառակուսի և բոլորակ ստուար աշտարակներով, բարձրաբերձ և ցած, ոմանք քանդուած, այլք անվիթար և ծածկուած կոնածեն բարձր տանիքներով, կապարով պատած, և անթիւ սանդուզը 'ի կործանման, որ ատամնաձեռց և ամբոցաց կը տանին: Շրջապատին մէջ բարձր և թանձրախիտ բոււսոց աճում մը կայ, տիրապետեալ նոնեաց և սօսեաց խմբէ մը, որոց վրայ կ'երեայ ծածկեալ փոքր մզկիթի մը մինարէն. ցածագոյն տնկոց մէջ, հիւղից խմբի մը տանիքներն, յորս զինուորք կը ննջեն մէջտեղը, վէզիրի մը գերեզմանն՝ որ դղեկին մէջ խեղդեցաւ. Հօս և հօն հին թագստոցի մ' անգեղեայ մնացուածքը. և թիւց մէջ և որմոց երկայնութեամբ՝ խորսքանդակաց կտորուանք, սեանց իրաններ և հողոյ մէջ խորասուցեալ խոյակներ, կէս 'ի կէս ծածկուած մոլախոտերէն և եղտիւրաց ջրերէն, նորածեն և տիսուր խառնակութիւն մը, լի գաղտնութեամբ և սպառնալեզք, որ առաջ երթալու կը խորչեցընէ: Քիչ մը կեցայ տարտամ չորս կողմը նայելով, և յետոյ առաջ զնացի զգուչութեամբ, իրեն վախնալով արեան Ծի մը մէջ սոք զնելու: Հիւղերը փակուած էին, փակուած էր մզկիթն: ամենայն ինչ ա-

մայի և անդորր, իբրև երեսէ թողած աւ երակի մը մէջ՝ Որմոց քանի մը կէտերուն վրայ գեռ յունտկան խաչերու հետք կան, կոստանդինանոսեան մենապրոց հատուածք, խորսակած թեսեր հըսովմէտական արծուեաց և բիւզանդեան հին շինուածոյն զարդուց նշաբներ, ժամանակէն սկցած: Այլ և այլ քարանց վրայ մանր գրերով յունական արձանագրութիւնք խոշորագոյնս փորագրած կը տեսնաւին, գրեթէ բոլոր կոստանդնի զինուորաց արձանագրութիւնք, որ կը պահէին ամրոցը, ընդհամանատարութեամբ թուլիանի փըրենտացւոյ, կոստանդնոս պօլաց անկման նախընթաց օրն: Խեղճ մարդիկ համակամեակը ՚ի մեռաննել, որ կ'աղաչէին զլստուած որպէս զի աւարառութենէ ազատէ իրենց քաղաքն և իրենց ընտանիքն ՚ի գերութենէ: Բսկեզօծ Դրան ետե կառուցած երկու աշտարակներէն մէկն այն է՝ յորում կը փակուէին Սուլդանաց հետ պատերազմ մի մէջ եղող Տէրութեանց գեսպանք, և հօն որմոց վրայ կը կարդացուին դեռ քսնի մը լատին արձանագրութիւնք, յորոց նորագոյն Ահմէտի Գթագաւորութեան ատեն բանտարկեալ վինետեկցի գեսպանացն է, երբոր Մորէայի պատերազմն ազեցաւ: Միւսն է նըշանաւոր աշտարակն՝ որուն կ'ընծայուին զղեկին տիրապյոյն աւանդութիւնք, աշտարակն որ կը փակէր սսակալի թոգըստոցներ, ողջերաւ գերեզմաններ, յորս աղօթելով խաւարին մէջ վէզիքը և մեծամեծք Արքունեաց կը սպասէին դաշնին երեման, կամ՝ ՚ի յուսահատութենէ խենինթեցած, կը թողուին որմոց վրայ եղնգանց և կառափանց արիւնաթաթաթ մէկուն մէջ սանդակը կը կար մեծ սանդղը՝ յորում իւլէմայից մարմինքը և սոկնըը կը փշրէին: Գետնայարկը կայ արեան բանտ կողուած բոլորչի մեծ սենեակն, յորում՝ ՚ի ծածուկ կը կառափնատէին դատապարտեալք, և զլուխները զբի մը մէջ կը ձգուէին, արեան գուր անուանեալ, որուն բերանը դեռ կ'երևայ

խորտաբորտ յատակին մէջտեղը, քարէ երկու հատորներով փակուած: Տակար մարդ կայ ժայռուտքարանձաւ կոչուածը, կամարը կախուած լսպտերով մը լուսանորեալ, ուր ՚ի տանչանս դատապարտելոց մորթը շերտածե կը կը արուէր, գաւաղաններէն բացուած փիրաց մէջ բորբոքեալ ձիւթ կը լեցուէր, և լսխտերով ոտքերն և ձեռքերն կը ջաղխուէին, և օրհասականաց ահուելի մանչինքը միայն իբրև տկար հեծութիւն մ'աշտարակին բանտարկիլոց ականջը կը համնէին: Երջապատին մէկ անկիւնը կը տեսնուին դեռ գաւածի մը հետքերն՝ յորում գիշերը սովորական դատապարտելոց զլուխը կը կտրուէր: և հօն մօտ շտա ժամանակ չէ որ դեռ կտր մարդկենցն ոսկերաց պատ մը, որ գրեթէ մինչև զղեկին հողարլուը կը բարձրանար: Մահց մօտիկ էնիչերաց կայսերական առաջին զոհին Օսմանի թ բանտը կայ: Այն սենեակն է՝ ուր ութուտասնամեայ եղիելի Սուլդանն, որուն յուսահատութիւնը ուժը կը կրնապատէր, կտաղաբար գէմ կեցաւ իրեն շրմա գահճացը, մինչև խուժագութ և վատշուէր ձեռք մը, ընդելացեալ ՚ի ներքինացուցանել զինքը բանեց և յաղերակնէ արութեան և հանեց իրմէ բարձրածիչ աղաղակ մը, որ խեղդանէն հեղձամղձուկ եղաւ: Ամեն ուրիշ աշաբարակոց մէջ և պարզապաց կողմը ստուերանիստ սրահից, զանխուղ սանդղոց, երկաթէ ուռամբք կոմմ հեծանօք փակուուծ ցած զրանց երթեկ մը կար, որոնց տակը գլուխ խոնարհնեցին վերջին անդամ փաշայր, կայսերական իշխանք, վարիչը, սենեկապանք, մեծամեծ սպայք ՚ի դալար տիս երիտասարդութեան և ՚ի կատար զօրութեան, յորոց ժամուան մը մէջ ամենայն ինչ կը վերցուէր. և արդէն իրենց զլուխն զղեկին արտաքին որմոնքն արեամբ ոռոգեր էր, մինչդեռ իրենց հարառները դեռ ևս շրեղաշուք հագած խորուպճինին փառաւորութեց մէջ իրենց կը սպասէին: Գիշերն լապտերաց լուսով կ'անցնէին այն շուր կա-

թող սրահներէն և այն դամբանական սանդողներէն զինուորք և դաշիճք արիւնազմնդ ձեռք, և Պալատան նուիրակէ՝ որ կու գային բերելու ՚ի մահ դատապարտելոց, տակաւին պատրելոց յուսոյ շառայլով մը, Սուլդանաց վերջին ոչն, և զիակունք ճակատնէն ՚ի դուրս ոստուցեալ աջք և սոսկալի կերպասէ չուտանն ՚ի պարանոցս, յուսահատութեան զայրութին դէմ՚ի խաւարի պատերազմեալ երկայն կուներէն աշխատած և խոնջ չաւուշներէն տարեալք : Մատամզոլի հանդիպակաց ծայրն Պալատան բրոյն վրայ Արքունեաց զարհուրեի ատեանը կար, Հօսկար տանջանաց ահագին մեքենայ մը, քարէ վեց կախաղաններով շինուած, որ լուսնի լուսով ծովէն և ցամոքէն կ'ընդունէր ողջ զոհեր, և արեգական ուրիշ բան չէր գարձըներ բայց եթէ կառափոնք և դիսկոնք . և աշտարակաց բարձրէն, յորս կը մեռնէն, գիշերային պահակապանք կը տեսնէն հեռու Պալատան հովանոցները կայսերական հանդիսից համար լուսաւորեալք : Եւ հիմայ հանջից զգացում մը կ'իմանաս՝ տեսնելով չարաշուէր դիեակն այսպէս անկերպարան եղած, իբրև թէ բոլոր սպանդներն յարութիւն առած կրծէին և փշէին զայն եղնդամբք և ատամամբք, յորմոց վրէժնին առնալով չկարենալայի մարդկանց : Ապազէն և զառամեալ մեծ հրէշն, իր ամրոցաց ծերպից և իր փեռակեալ գըրանց հարիւր բերաններով կը յօրանջէ, սին թափուր խրտուիլակ մը դարձած, և մկանց, օձից և գեղնաշորթ կարճաց բազմութիւն մ' իր նեխսահոտ մարմնէն որդանց պէս եռացած, իր դատարի վսրոյն և իր խորտակեալ երիկամննց մէջ կը վլստայ, բուսոց իբր աճման մը մէջ, որ զայն կը պսակէ և ցցունազարդ կը պճնէ ՚ի կատականս : Յետ հանդիպելց զանալան դրանց ուրիշ բան չի տեսնելով բայց առնէտներու խուճապաւ փախուստ մը, խոտալից սանդղէ մ'երայ արևելեան կողման միջնորմներէն մէկուն վրայ : Անկից

կ'իշխես բոլոր զղեկին վրայ . ընդարձակ խառնակութիւն մ'աւերակաց, աշուրակաց, ատամնաձևոց, սանդղոց, սարահարթ տեղեաց, բոլոր սենագոյն և միմին կարմիր, կենգանի կանաչի մեծ գէզի մը չորս կողմը . և անկից, Ստամպօլի արևելեան պարսպաց ուրիշ անթիւ աշտարակներ և ատամնաձևեր, այնպէս որ թերարաց աշուրներով կը կարծես տեսնել մի միայն բարձի թողի եղող լայնանիստ բերդ մը, որ կը նկարուի Մարմարա ծովուն կապրուտին վրայ : Զախսակողմը Ստամպօլի մեծ մաս մը կը տեսնուի, այլ և այլ օձապտոյտ երկայնաձիգ ճամբաններէ կտրուած, որ կը հեռանան բիւզանդական ինքնակալց յաղթական հին ճամբռն ուղղութեամբ, որ Ռուկեզօծ դունէն՝ անցներով ընդ հրապարակն Արկադիոսի և ընդ հրապարտակն կսոստանգնի, մինչև յարքունիս կ'երթար : Անհուն և ծիծաղը կոտ տեսիլ մ'էր, որ ոտքիս տակն ունեցած շարագուշակ աւերակաց կոյտնինձի աւելի գժնէագոյն կ'երկոցնէր : Երկայն ժամանակ հօն մնացի, արևէն շեռուցեալ ատամնաձևի մը յեցած, ճաճանչագեղ լուսով մը շացեալ, նայելով այն անկափարիչ մեծ գերեզմանին տակը սյնափիսի մտայցյ և կեզակարծ հետաքրքրութեամբ՝ որով կը նայուին այն տեղուանքն՝ ուր այն ինչ նոր ոճիր մը գործեցաւ : Խորին լուռթիւն մը կը տիրեր : Պատերէն խոչոր մոլցներէն կը վազէին, վարը փոսից մէջ կը կարկաչէին գորտունք, աշտարակաց վրայ կը թուչէին ագռաւաք, գլխօյս չորս կողմը կը բզզար աւերակաց եղտիւներէն եկած միջատից ամպ մը, և քիչ մը յուզեալ օգն կը բերէր ինձի որդնոստած ձիու մը զարշահոտութիւնը, որ բերդին արտաքին փոսին խորը տարածուած էր : Զգուանաց և սարսուի զզացում մը վրաս եկաւ . և սակայն իբրև զիթեալ ես զիս հօն բեւռած, կը զգայի, տեսակ մը թմբրութեան մէջ ընկլմած . և աշւըներս թերափի բռնելով, գողցես երաղելով՝ այն միջօրէի մահահանգոյն խաղաղու-

թեան մէջ, միջատից միակերպ բզզանաց մէջ, կարծես թէ կը լսէի գրոյն մէջ ձգուած կառափանց թնդինը, գետնափոր տեղեաց օրհասականաց եղբական աղաղակը և Պրանգովանսոսի փոքր որդւոյն ձայնը, որ իր վզին վրայ խեղդանին ցուրտն զգալով, կը կանչէր, — Հայր իմ, Հայր իմ! — Եւ որովհետեւ յոդնած էի և լցուր զիս կը խըտարդէր, աշուներս փակեցի և քիչ մը ժամանակ թմրած մնացի. և փութով բոլոր այն սոսկալի պատկերներն զարհուրելի երսեմամբ մը կը խոնին մոտացս մէջ, Այն կէտին սուր և գոյաւոր աղաղակէ մը գրդուեցայ, և վարը փոքր մինարէին տամալեաց վրայ տեսայ դղեկին մզկիթին միւէզզինը: Այն յամի, քաղցր, հանդիսական ձայնը, որ զԱստուծոյ կը խօսէր, այն տեղւոյն մէջ, այն վայրկենին, իջաւ իմ հոգւոյս խորագոյնը: կարծես թէ կը խօսէր յանուն անոնց ամենուն որ հօն ներսը մեռած էին, որ կ'ըսէր թէ իրենց ցաւերն անօգուտ չէին եղած, իրենց յետին արտասույն ժողովեալ էին, իրենց կտառանկըր փոխարէն մ'ունեցեր էին, իրենք ներեր էին, թէ պէտք էր ներել, պէտք էր աղօթելի յլսառուած վստահիլ նաեւ երբ զմել աշխարհ լքանէ, և թէ յերկրի ամենայն ինչ ունայնութիւնն է բաց՝ այս միրյ և գթութեան անհուն զգացմանէն . . . Եւ գորովեալ ելայ զղեկէն:

Ճամբաս շարունակեցի դէպ ՚ի ծովն՝ Ստամպօի արտաքին պարսպաց երկայնութեամբ: Հօն մօտ Աղբիանուալուույ կայարանը կայ և պարսպաց տակ քանի մ' երկաթէ ճամբու կտորներ մէկզմէկ կը կորեն: Հինյած և փոշելից կառաց երկայն գծի մը մէջտեղ գտնուեցայ: Զկար մէկն, եթէ մոլեռանդն տաճիկ մ'եղած ըլլայի, թշնամի եւ քոպական նորութեանց, կարող էի մի զմիոյ կնի այն հիւղերն հրդեհել, և հանդստեամբ երթալ առանց ուրիշէն նեղուելու: Յառաջ զնացի ճամբուն ծայրը՝ վախնալով լսելու վայրկենէ

վայրկեան պահապանի մը ապառնալից իշտն. այլ մէկը զիս չի նեղեց: Գիշատենէն պարսպաց ծայրն հասայ, կարծէի որ կարենամ մոնել հօնկէ ՚ի ըստամպօլ, խաբուեցայ: Յամսգի կողման որմնակն կը միանան ափանց վրայ ծովին կողմը եղածին հետ, և դրան նշան չկայ: Այն ատեն յառաջեցի նաւահան, գրաստի հին ամբարտակի մ' աւերակներէն դէպ ՚ի վեր և նստայ որձաքարի մը վրայ լրացն մէջ տեղ: Հօնկէ միայն Մարմարա ծովն, Ամիոյ լեռներն, և Սկիւտարի կապուտակային բարձունքը կը տեսնէի, որ ամենահեռու կը կարծուէին: Ծովեցերըն անապատ էր. կը կարծէի որ միայն եմ տիեզերաց մէջ: Ակիք իմ ոտիցս տակ կու գայիին խորտակելու և երեսս կը ցնցղէէն: Ժամանակ մը հօն մնացի, հազար բանելու վրայ մտածելով, անորոշ կերպով: Կը տեսնէի զիս միայն ելլել Գալիկարիոյ գոնէն և յուշիկ վար գալ ամսյի ճամբէն, գերեցվանատանց և աշտարակաց մէջ, և կը հետուէի այն մարդուն, իբրև թէ ուրիշ մ'ըլլար: Ապա անհուն քաղաքին մէջ սկսայ զիունք փնտուել: Յետոյ կեցայ ալիքներն դիտելու, որ հետզհետէ կու գային մրմարով տարածուելու ափանց վրայ և անհետ կ'ըլլային մի զմեյ կնի ՚ի լուսթեան. և ՚ի նոսա կը տեսնէի ժողովրոց և բանակաց պատկերն որ եկիր էին մի զիետ միոյ բաղիսելու ընդդէմ'պարսպաց թիւզանդիւնի, Պաւանիսասի և Ալիլիպիաց փաղանգներն, Մաքսիմոսի և Սեվերոսի լեզոնքն, Պարսից գունդքն, Ավարացւոց Լոլիբըն, և Սլավէ և Արաբք և Պուլզալաք և Խաչակիրք, և Միքայէլ Պալէոնդոփի և կոմմենտուի և երլարը մ'Պայազիտի և երկրորդ Մուրատի և աշխարհակալ Մէջէմմէտի բանակը մի զմիոյ կնի աներեսոյթ եղած մահուան անհուն լուսթեան մէջ. և կը զգայի այն տիրութիւնն՝ որ կը ճնշէր Լէոբարտիի սիրտն յառուր տօնի երեկորին, երրոր արուեստաորին մենաւոր երգոյն կամաց կամաց աւարտիլը կը զգար, որ իրեն կը յիշեցընէր հին

ժողովրդոց ձայնն, և կը մնածէք որ եր՝ կրիս վրայ ամենայն ինչ երազի մը պէս կ'անցնի:

Հօնկէ ետ դարձայ մինչև եօթն Աշտարակաց գուռն և ներս մտայ պարիս, պնիքէն՝ ընթանալու բոլոր Ստամբուլը Մարմարա ծովոն ափան երկայնութեամբ: Արդէն կէս յոգնած էիք բայց երկայն շրջագայութեանց մէջ, ինչուան կէտ մը նոյն իսկ խնճութենէն կը ծընանի անասնական յամառութիւն մը որ ուժը կը զօրացընէ: կը տեսնեմ տակաւին պտըտիլ և պտըտիլ այն ամայաբնակ ճամբաներէն, այն հրաբորքոք արեւոն տակ, չգիտեմ ինչպիսի դանդաշական քնափութենէ բռնուած, յորում կ'անցնէն առջեխ դուրինի բարեկամաց դէմքեր, վիպաց միջին պատահաններ, ուրիշ երկիրներու տեսարաններ և աստանդական մտածումներ մարդկային կենաց և հոգւոյ անմահութեան վրայ. և ամենայն ինչ կը յանդէր թիւզանդինի պանդոկին սեղանին, լյսերով և բիւրեղներով փողփողուն, որ ամենահեռու կը տեսնէի, Ստամպուկէն հարիւր անդամ աւելի մեծ քաղաքէ մ'անդին, և արդէն դիշերէն գողասուզած: կ'ընդմիջնեմ մահմետական արուարձան մը, որ թուի անբնակ, յորում կը շնչէ դեռ եօթն Աշտարակաց դղեկին տիրութիւնն, և կը մըտնեմ բասմադիայի լայն թաղին մէջ, բնակեալ 'ի Յունաց և 'ի Հայոց, և այն ալ անապատ: Յառաջ կ'երթամ ծամածուած անվախճան նըրափորդցներէ, յորոց կը տեսնեմ վարն աջակողմը, տանց և ատանց մէջ, քաղաքին ատամածնեալ պարիսպներն, որ իրենց սկատամածներն ծովուն կենդանի կապուտին մէջ կողմնակի կը նկարեն: կ'անցնիմ բասմադիայի դրան տակէն և նորէն կը գտնուիմ մուսուլման թաղի մը մէջ, վանդակապատ պատուհանաց, փակեալ դրանց և առաջնակալ դրանց, խոտալից ջըրհորոց, բերալ աղբերաց մէջ: կը կորեմ միջոցն ուր եղանց հին հրապարակն էր,

վարն աջակողմը տեսնելով միշտ պարիսպն և աշտարակին, և չհանդիպելով բայց եթէ շան մը՝ որ կը կենայ անցնիլս տեսնելու և գետին նստած տաճէկ ստահակի մը՝ որ երեսս պիշպիշ կը նայի, գժպատեհութիւն մը մտածելով: Պատուհան մը կը բացուի և յանկարծութիւն կարծութիւմ, որ թէողոսի հին դրան պըսակ կը յօրինեն: կը տեսնեմ նոր հըրդեհի մը հետքով լայնատարր միջոցներ, տեղեր՝ ուր կարծես թէ քաղաքը գեղի մէջ կը լմնաց, տէրվիշներու վանքեր, յունական եկեղեցիներ, խորհրդատոր հրապարակիներ՝ մեծ սօսիով մը հովանաւորեալ, որուն տակը ծեր մը նարկիչի բերանը մատանցը մէջ կը մրափէ: կ'երթամ յառաջ, կանկ կ'առնում փոքր սրճարանի մը դիմաց պատուհանի վրայ դուրս դրուած գաւաթ մը ջուր խմելու, կը կանչեմ, կը զարնեմ, ոչ ոք կը պատասխանէ: Ենի՞ գափուի յունական թաղէն կ'ելլեմ, ուրիշ մահմետական թաղի մը մէջ կը մտնեմ: ուրիշ անգամ մ'ալ նորէն կը մտնեմ գում դրան թաղին յունական և հայկական տանց մէջ, և հետա կ'ընկերեն միշտ մէկ կողմէն պարսպաց ատամածներն և ծովուն կապոյտը, և կը հանդիպիմ միայն շանց, մուրացկանաց, ստահակաց, և կը լսեմ միւէզզինի ձայնին բարձրէն հնչելը՝ որ արևմուտքը կ'իմացընէ: Եղը կը միժնայ. և կը շարունակեն յաջորդել տնակը, մելամաղձիկ մղկիթք, ամայի կիցք ճանապարհաց, գլուխք նըրքափողոցաց. և կը սկիմ խոնչութիւն գդալ և մնածել առաջին տեսած սրբանիս բազմոցի մը վրայ ինկնալոս, երբոր դարձուածքի մ'ատեն, յանկարծակի առջև կ'ելլէ Սուրբ Սոփիային ահագին շինուածն: Ո՛վ տեսիլ սիրային: Ոյժս կը դառնայ, մտածումներս կը պայծառանան, կը ճեպեցընեմ քայլս, կը հասնիմ նաւահանգիս.

ար, կ'անցնիմ կամուրջն, և ահաւաս սիկ կալագ-այի առաջին սրճարանին լուսաւորեալ դրան առջևն, Եռնք, Ռոպասպոյ, Անդորոյ, բոլոր իմ փաքր խտալիաս որ ինձ ընդ առաջ կու գայ

ծիծաղկոտ դէմբով և երկայնեալ բազ-կօք . . . և կը կլլեմ երկայնագոյն և բայնագոյն շունչերէն մէկն զոր երբեք կըլլած ըլլաց ազնուականի մը թոքերն

Իր շարունակուի:

## Ա.ՏԵԼՍՊԵՐԿԻ ՔԱՐՈՅՑ

Լիւրիկոյ գարմանալի բաներուն մէջ հաշակաւորագոյնն է անտարակոյս Ատելսպէրկի հանքերն և մամնաւորապէս կրոգդպի մետապըն, որուն մուտքը հօս 'ի պատկերի կը ներկայացընենք:

Ատելսպէրկ' լուպիհանայի վարչութեան մէջ պղտի քաղաք մ'է, համանուն գաւառին գլխաւոր տեղի, հեռի 'ի Լուպիհանայէ (Լայպախ) 38 քիլոմէտր գէպ 'ի հարաւային արմամտուք: Զարմանալի քարանձաւը, որ քաղաքին անունն առաւ, Ատելսպէրկէ քիչ հեռու փոքր հովտի մը մէջ կը գտնուի, լուէկ թին մօտ: Երոպիկոյ ամենէն նշաննաւոր հանքն է, և տարածութեամբ և գեղեցկութեամբ թերեւ բոլոր աշխարհիս: Մէջը կրնաս պոլոտիլ զրեթէ ինչուան ութ քիլոմէտր՝ ճամբաներու, սրահից, նուրբ անցից, լայնատարր գահնձաց, անձուկ սենեկաց, ուղիղ և ծամածուռ սանդղոց (յորոց կ'ելլես և կ'լինես ուրիշ վերնակայ և ստորակայ սյըրեր) լարիւրինթօսի մը մէջ. ամեն կողմ սփոռուած է նախաջնեղեղեան կենդանեաց բրածոյ ոսկերք կամ ծածկուած ալապասդրեան շնաքարամբք, որ քեզի կ'ընծայեն զանազան տեսիլիներ, մերթ հին պալատան մ'աւերակիր հանդիսացնելով, մերթ տաճարի մը մեծավայելու, երբ և տաճար կամ քահանա ու առաջար կամ ծովութեամբ և զանազանութեամբ, այլ նոյնչափ ընդարձակ չէ: Հօս կու գայ թօլիքդ կորուելու, որ այս ստորերկրեայ անդաւոյն ծայրը լին մը կը ձեւացընէ լցեալ բազմաթիւ բրոդէիներով, եղական զեռունք՝ որ արևուն լցյան երբեք չեն տեսներ և որոնց վրայ շատ առասպելներ եւան:

Ատելսպէրկի այրէս զատ, որ նըշանաւորագոյնն է, կը համրուին այս նկուղներէն կամ քարանձաւներէն ու-

րիշ հազարէն աւելի՝ բոլոր այն ալեձե ընդարձակ երկրին վրայ սփոռուած, որ կ'ինկնայ Ալպեանց Գարնիխէի և ձիուլիէի տակ՝ աւստրօ-իտալական սահմանագլխոյն վրայ:

Այցելուք կ'ինչեն Ատելսպէրկի այրն՝ առանձին կերպով լուսաւորուած հարիւրաւոր մոմերով, և երկաթէ լայն գռնէ մ'անցնելով կը գտնուին նորանշան տեղ մը. ուր հարիւր հնչող արձագանքը ծածկուած 'ի խորն կը բազմապատկեն հեղեղատի մը տխուր կարկաջը, որ բազմաշտաւչ կը վագէ այն անհուն սառուերկրեայ տեղեաց մէջ և հօն կը կորսուի: Բօլիքդ գետն է՝ որ խորհրդաբար կը սողայ այն յաւիսենական խաւարին մէջ, կամրջէ մը կ'անցնիս անկէ: Այս անուանի քարանձաւին բերնէն երեք կամ չորս քիլոմէտր հեռուու ուրիշ այրի մը մուտքը կայ: Մատտաղէննա անձաւն է՝ Ատելսպէրկինէն աւելի բարձր և անկէ աւելի նշաննաւոր շնաքարանց ճոխութեամբ և զանազանութեամբ, այլ նոյնչափ ընդարձակ չէ: Հօս կու գայ թօլիքդ կորուելու, որ այս ստորերկրեայ անդաւոյն ծայրը լին մը կը ձեւացընէ լցեալ բազմաթիւ բրոդէիներով, եղական զեռունք՝ որ արևուն լցյան երբեք չեն տեսներ և որոնց վրայ շատ առասպելներ եւան:

Զենք ուզեր հօս մանրամանաբար նկարագրել ամենայն տեսարաններն զոր կ'ընծայեն քարանձաւէքս միայն ընթերցողին կը թողունք երևակայելու այն զարմանալի պատկերն այնչափ մուերու լուսավ անդքարձեալ և բեկ-